



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 19 » 04 2019թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 21

Ձեռնարկողը՝

«Մերուժ և Էլեն» ՍՊԸ

Արագածոտնի մարզ, գ. Բազմաբերդ փ. 17, փ.5

Գործունեությունը՝

**Եղնիկի փուֆերի հանքավայրի հարավային
փեղամասում երկրաբանական ուսումնասիրության
աշխատանքների շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայր**

Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿի
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 21

<<13>> 04 2019թ.

**Եղնիկի տուֆերի հանքավայրի հարավային տեղամասում
երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝ «Մերուժ և էլեն» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝ Արգածոտնի մարզ, Եղնիկ համայնք

«Մերուժ և էլեն» ՍՊ ընկերությունն օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով, 2019թ. ընթացքում Եղնիկի տուֆերի հանքավայրի հարավային տեղամասում նախատեսում է իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Երկրաբանական-հետախուզական աշխատանքների նպատակն է՝ ուսումնասիրել և պարզաբանել տուֆերի որակական հատկանիշները, դրանց բավարարությունը 9479-98 և 4001-ԳՕՍՍ-երի տեխնիկական պահանջներին և պիտանելիությունը՝ երեսպատման և ուղիղ կտրվածքի պատքարի արտադրության համար:

Եղնիկի տուֆերի հանքավայրի Հարավային տեղամասը ծագումնաբանորեն հարում են Թալին-Շամիրամի տուֆային ծածկոցին, ընկած է 1900-2000մ բացարձակ բարձրությունների վրա: Տեղամասը գտնվում է Թալինի տարածաշրջանում՝ Եղնիկ համայնքի վարչական սահմանում, բնակավայրից 1.0կմ հարավ-արևելք: Ուսումնասիրության համար տրամադրվող հողատարածքը զբաղեցնում է 3.6հա մակերես, որի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը՝ արոտավայր: Տարածքը նախկինում խախտվել է ընդերքօգտագործման աշխատանքներից, մոտ 60-70 տոկոսը զուրկ է հողաբուսական ծածկույթից, բերրի շերտի հզորությունը երևակման տարածքում չի գերազանցում 0.2-0.3մ-ը: Համաձայն կենսաբազմազանության վերաբերյալ իրականացված մասնագիտական հետազոտությունների՝ դիտարկվող տարածքում << Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակները բացակայում են :

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը չի առնչվում բնապահպանական տարածքների, բնության հուշարձանների և Եղնիկ համայնքում գոյություն ունեցող պատմամշակութային հուշարձանների հետ:

Տարածաշրջանի ջրային հոսքը Սելավ Մաստարան գետն է, որը հարավային տեղամասից գտնվում է 15 կմ հեռավորության վրա: Գործունեության ենթակա

տարածքում ստորերկրյա ջրերը բացակայում են: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծավալներում ներառված են նաև տեղամասի հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ:

Ծրագրով նախատեսված երկրաբանահետախուզական աշխատանքներն իրականացվելու են հորատանցքերի և մերկացումների միջոցով: 3.6հա մակերեսով տարածքում կատարվելու է 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ և կազմվելու է տեղամասի երկրաբանական քարտեզ:

«Մերուժ և Էլեն» ՍՊԸ ընկերության կողմից Եղնիկի տուֆերի հանքավայրի Հարավային տեղամասում երկրաբանական ուսումնասիրությունը նախատեսում է իրականացնել հետևյալ մեթոդանաբությամբ.

- 1:1000 մասշտաբի տոպոմարկշեյդերական աշխատանքներ՝ 3.6հա մակերեսում,
- մեխանիկական սյունակային հորատում՝ ինքնազնաց հորատող հաստոցով
- 6 հորատանցքերում հորատող հաստոցի տեղակայում,
- 200մ³ ծավալով փորձնական հանույթ,
- նմուշարկում՝ պետրոգրաֆիական և քիմիական կազմի ուսումնասիրությունների համար,
- հետախուզական փորվածքների փաստագրում, այդ թվում՝ 120մ հորատահանուկ, 80մ փորձնական բացահանք, 20մ բնական մերկացումներ,
- լաբորատոր ուսումնասիրություններ, հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական դիտարկումներ,

Համաձայն տեղում կատարված չափագրական աշխատանքների, նախկինում անցած բացահանքի մակերեսը կազմում է մոտ 2000քմ: Ուսումնասիրության ծրագրով օգտակար հանածոյի պիտանի բլոկների ելքի որոշման համար նախատեսվում է անցնել փորձնական բացահանք 200խմ ծավալով, որի մակերեսը կկազմի 500քմ, հետևաբար լրացուցիչ մակաբացման աշխատանքների անհրաժեշտություն չի առաջանալ:

Հետախուզվող տեղամասում օգտակար հանածոյի եզրագծման և ըստ խորության ուսումնասիրման համար, ինքնազնաց հորատող հաստոցով նախատեսվում է հորատել 6 հորատանցք՝ մինչև 20մ խորությամբ, 120մ³ ընդհանուր ծավալով: Հորատահանուկի նվազագույն ելքը կկազմի 80%: Հորատանցքերի հորատումն իրականացվելու է՝ սյունակային հորատման ուղղածիզ հորատանցքերով՝ 132մմ և 112մմ տրամագծերով կարծր համածուլվածքային թագիկներով: Քանի որ երևակման տարածքն ունի հարթ մակերևույթ հորատման հարթակների կառուցում չի նախատեսվում: Այն մասերում, որտեղ թեքությունը կկազմի 20-23°, հորատման հաստոցի մի կողմի անիվները նախատեսվում է իջեցնել մինչև 0,3-0,4մ խորությամբ, որտեղից հանված 0,8խմ առավելագույնը ծավալը անմիջապես հորատման աշխատանքների ավարտից հետո կարող է հետ լցվել:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից, բնական մերկացումներից ու բացահանքից: Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 18 հանուկային նմուշ՝ 6 մենաբար բացահանքից և մերկացումներից, 1 նմուշ պետրոգրաֆիական ուսումնասիրությունների ու 2 նմուշ քիմիական կազմը որոշելու համար: Վերցված



նմուշների լաբորատոր հետազոտությունները նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում:

Երևակման տարածքում կատարվելիք աշխատանքների արդյունքում հողերի խախտում չի նախատեսվում, քանի որ պայմանավորված երևակման տարածքի հարթ մակերևույթով և օգտակար հաստվածքի մերկացվածության աստիճանով՝ հորատման հարթակներ չեն կառուցվում: Քանի որ փորձնական հանույթը կատարվելու է նախկինում անցած բացահանքի տարածքում, փորձնական բացահանքի անցման ժամանակ ևս հողային ծածկույթի խախտվում և մակաբացման ապարների առաջացում չի նախատեսվում: Աշխատանքների կատարման համար օգտագործվելու է գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները, նորերի կառուցում չի նախատեսվում:

Փորձնական հանույթի ժամանակ կառաջանան փոքր ծավալով թափոններ, որոնք կօգտագործվեն դեպի երևակում տանող դաշտամիջյան ճանապարհի բարեկարգման համար, ինչը միաժամանակ թույլ կտա խուսափել ընդերքօգտագործման թափոնների առաջացումից և դրանց կուտակման համար հողերի օտարումից:

Երկրաբանահետախուզական աշխատանքների տեխնոլոգիայով վտանգավոր արտահոսքեր չեն առաջանա, քանի որ վտանգավոր քիմիական նյութեր չեն օգտագործվելու: Տարածքից անձրևաջրերը և ձյան հոսքերը՝ պայմանավորված ապարների կազմով, կհեռանան բնական եղանակով:

Աշխատանքների համար տեխնիկական նպատակով ջրօգտագործումը նախատեսվում է իրականացնել ջրատար մեքենայով, իսկ խմելու համար կօգտագործվի շշացված ջուրը:

Նախնական գնահատման հայտում ներկայացվել է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, ջուր, հող, կենսաբազմազանություն/ պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները.

- հանքերևակման տարածքներում և ավտոճանապարհների մակերեսներին մթնոլորտային օդի և հողի որակների պարբերաբար դիտարկումներ /մոնիթորինգ/,
- փոշեառաջացման կանխման նպատակով արտադրական գոտիներում (փորձնական հանույթի բացահանքի սահմաններում և հորատման աշխատանքների ժամանակ) ջրցանում,
- կիրառվող հանքային տեխնիկայի և սարքավորումների տեխնիկական վիճակի կարգավորում, արտանետման խողովակի վրա գոտիչների տեղադրում (ծխագազերի արտանետումների գերազանցումները կանխելու նպատակով):

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ընկերությունը շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության կանխարգելման և շրջակա միջավայրի բաղադրիչների /օդ, ջուր, հող/ որակի վերահսկողության համար նախատեսում է մշտադիտարկումներ, որոնց գործողությունների ծախսերը նախնական գնահատվել են 200 հազար դրամ: Նախատեսվել են միջոցառումներ՝ ծախսերի գումարային գնահատմամբ, ուղղված աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր թափոնների կառավարմանը:

Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, **ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Արագածոտնի մարզի Եղնիկ համայնքում անցկացվել են հանրային**



քննարկումներ, որոնց ընթացքում նախատեսվող գործունեությունը մասնակիցների կողմից արժանացավ հավանության:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են բնապահպանության նախարարության՝ ընդերքի և հողերի քաղաքականության վարչությունը, կենսառեսուրսների կառավարման գործակալությունը, որոնց կողմից ներկայացված դիտողությունները և առաջարկությունները ևս հաշվի են առնվել հայտում:

Եզրահանգում. Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում աշխատանքների ոչ մեծ ծավալների պատճառով շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կկրեն ժամանակավոր և տեղային բնույթ: Հայտում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման դեպքում, գործունեության իրականացման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, ինչպես նաև հողային ռեսուրսների վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է ապահովել շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կանխարգելելու նպատակով նախատեսված միջոցառումների, ներառյալ մշտադիտարկման (մոնիթորինգի) իրականացումը և դրանց ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մերուժ և Էլեն» ՍՊԸ կողմից ներկայացված Եղնիկի տուֆերի հանքավայրի հարավային տեղամասում երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ



Հ. Մկրտչյան